



## ՄՈՏՈՑԻԿԼԵՏԱՅԻՆ ԳՐՈՂԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՆՐԱՑ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

Հաշվի առնելով տարբեր նշանակության դրոնների և ԱԹՄ-ների լայն կիրառումը՝ հակամարտող կողմերը մշտապես փորձում են կատարելագործել իրենց ստորաբաժանումների հարձակողական գործողությունների մարտավարությունը:

ԱԹՄ-ների զանգվածային կիրառման և իրական ժամանակում օդից մարտադաշտի մշտական դիտարկման պայմաններում երկու կողմերի զրահատեխնիկան դառնում է բավականին խոցելի թիրախ, մինչդեռ արագընթաց մոտոցիկլետներն (բազիները, քվադրոցիկլները) ավելի դժվար է հրետանու կրակով և ԱԹՄ-ներով ոչնչացնել, ուստի որոշ դեպքերում դրանց կիրառումն արդյունավետ է, բայց ռիսկային:

Պրակտիկան ցույց է տալիս, որ մոտոտեխնիկայի օգտագործմամբ հարձակման վարումը հաղթանակ ապահովող բացառիկ միջոց չէ, այլ արդյունավետ է միայն այլ բաղադրիչների հետ համատեղությամբ (հետախուզություն, ՌԷՊ, ԱԹՄ, կրակային աջակցություն և այլն): Այսինքն՝ փոխլրացնում են մնացած ուժերի ու միջոցների կիրառման արդյունավետությունը:

## Մոտոցիկլետային գրոհային խմբի (ՄԳԽումբ) կազմը, կրակի տեսակները, կառավարումը, մարտավարությունը և մարտավարական հնարքները

Մոտոցիկլետային գրոհային խմբերը (ՄԳԽումբ) սովորաբար բաղկացած են երեքից հինգ ենթախմբերից՝ երկու զինծառայողներից (վարորդ և հրաձիգ), բարձր անցունակությամբ սպորտային երկանիվ մոտոցիկլետներից: Անձնակազմը սպառազինցած է հրաձգային զենքերով (ինքնաձիգ, գնդացիր), ռեակտիվ հակատանկային նռնակներով, ձեռքի նռնակներով և ՀՏՀՀ-ներով:

Մոտոցիկլետների օգտագործումը թույլ է տալիս մեծացնել կրելի զինամթերքը, ապահովել անձնակազմի տեղափոխումը առաջնագիծ և վիրավորներին արագ տարահանել մարտի դաշտից: Մոտոցիկլետից կրակելիս կիրառում են կրակի հետևյալ տեսակները.

- **կրակ ընթացքից** - հետևի նստատեղին հրաձիգի առկայության կամ մոտոցիկլետի վրա հատուկ ամրացմամբ տեղադրված ավտոմատի կամ գնդացիրի միջոցով, որը թույլ է տալիս վարորդին կրակ վարել մեկ ձեռքով,

- **կրակ կարճ կանգառներից** - հրաձգային զենքերից մի քանի կրակահերթեր կատարելու համար կանգառները տևում են 4-8 վայրկյան: Կարճ կանգառների տեղերը ընտրվում են թաքստոցների հետևում,

- **կրակ կանգառներից** - իրականացվում է թաքստոցի հետևից, երբ մոտոցիկլավարը մարտական արագությամբ մոտենում է թաքստոցին և կարճ ժամանակով կանգ է առնում թիրախը խոցելու համար:



Նկ. 1. Մարտական մոտոցիկլին ամրացված գնդացիրի, ՁՀ-ի և ռադիոկայանի տարբերակ (ԱՄՆ ՋՌԻ)

Մոտոցիկլետային ստորաբաժանումների կառավարման հիմնական միջոցը ռադիոկայաններն են: Նշանացուցման համար կիրառվում է ռադիոկապի միջոցով տրվող հրահանգները կամ լուսածրող գնդակներով փամփուշտները: Յուրայիններին ճանաչելու համար օգտագործվում են վառ և տեսանելի գունավոր ժապավեններ:

ՄԳԽումբը կարող է գործել ինչպես առանձին՝ կրակային աջակցության ստորաբաժանումների հետ համատեղ, այնպես էլ այլ հրաձգային ստորաբաժանումների կամ զրահախմբի հետ միասին:

ՄԳԽՄԲԵՐԻ հարձակմանը նախորդում է հակառակորդի դիրքերի մանրամասն հետախուզումը, կրակային միջոցների, ինժեներական արգելափակոցների տեղակայման բացահայտումը, հակազոդող անձնակազմի թվաքանակի որոշումը, տվյալ հատվածում ԱԹՄ-ների թռիչքի ժամանակը և դրանց կիրառման ինտենսիվությունը, տեղեկատվության փոխանցման տևողությունը՝ հայտնաբերման պահից մինչև հրետանու, ակնանետների և ԱԹՄ-ների կրակի հասցնելը:

ՄԳԽՄՈՒՄԲՐԸ հարձակումից առաջ, կախված իրավիճակից և առաջադրանքներից, կարող են գտնվել.

- կենտրոնացման շրջանում,
- սպասման դիրքերում,
- ելման դիրքերում,
- հավաքման կետում:

**Կենտրոնացման շրջանում** մոտոցիկլավարները տեղակայվում են նախքան մարտը կազմակերպելը: Որպես կանոն, այն գտնվում է հակառակորդի կրակային ազդեցության տարածքից դուրս, պատսպարված է օդային և ցամաքային դիտարկումներից, ինչպես նաև մարտական շփման գծի ուղղությամբ ունի հարմար մատակարարման և առաջխաղացման ուղիներ:

**Սպասման դիրքը** մոտոցիկլավարներով զբաղվում է մարտի կազմակերպման ընթացքում, մինչև ելման դիրք տեղափոխվելը: Այն ընտրվում է ապագա գործողությունների շրջանի այն վայրում, որն ապահովում է մոտոտեխնիկայի և մարտին պատրաստվելու գաղտնիությունը, ինչպես նաև ունի հարձակման օբյեկտին մոտենալու քողարկված մատույցներ: Մարտական շփման գծից սպասման դիրքի միջև ընկած հեռավորությունը պաշտպանվում է ՄԳԽՄԲԻ անձնակազմի կողմից:

Մոտոցիկլավարները **ելման դիրքը** զբաղեցնում են հարձակումից անմիջապես առաջ և գտնվում են լրիվ մարտական պատրաստականության վիճակում: Այն թույլ է տալիս նրանց գործել մարտակարգով և, որպես կանոն, գտնվել հարձակման ուղղությամբ, ունենալ թաքնված մոտեցումներ թիկունքից, հարմար ուղիներ հարձակման համար և պաշտպանված լինել օդային ու ցամաքային հսկողությունից: Ժամանակի առկայության դեպքում, մինչև մոտոցիկլավարները կզբաղեցնեն դիրքը, կարող են սարքավորվել խրամատներ կամ ապաստարաններ: Ելման դիրքի հեռավորությունը պաշտպանում է անձնակազմին և տեխնիկան հրաձգային զենքերի և ակնանետների արդյունավետ կրակից:

Որոշ դեպքերում ելման դիրքերի փոխարեն կարող են նշանակվել **ծավալման բնագծեր**: Մոտոցիկլավարները սպասման դիրքից շարժվելիս **ծավալման բնագծում**, ընթացքում, վերադասավորվում են հարձակման անցնելու մարտակարգի:

Մինչև ելման դիրք հասնելը մոտոցիկլետների անձնակազմերն ուսումնասիրում են հակառակորդի կրակային միջոցների տեղակայումը, տեղանքը հարձակման ուղղությամբ և հրահանգներ ստանում արգելապատնեշներն ու խոչընդոտները հաղթահարելու կարգի վերաբերյալ:

Մարտում մոտոցիկլավարներին հավաքելու համար նշանակվում են.

- հիմնական հավաքման կետ,
- միջանկյալ հավաքման կետ,
- պահեստային հավաքման կետ:

**Հիմնական հավաքման կետը** նախատեսված է մարտական խնդիրը կատարելուց հետո ՄԳԽՄՈՒՄԲՐԸ հավաքելու համար՝ հետագա խնդիրներ ստանալու, նյութական մասը կարգի բերելու և զինամթերք ու ՎՔՆ ստանալու համար:

**Միջանկյալ հավաքման կետը** նախատեսված է մոտոցիկլավարներին մարտի դաշտում լրացուցիչ խնդիրներ առաջադրելու, հետևակի և գորատեսակների ստորաբաժանումների հետ կապը վերականգնելու, զինամթերքը համալրելու և վիրավորներին տարհանելու համար: Միջանկյալ հավաքման կետերը նշանակվում են հակառակորդի կրակից պատսպարված վայրերում: Այն դեպքերում, երբ մոտոցիկլավարների մուտքը նախատեսված հավաքման կետ անհնար է, յուրային հետևակի տեղակայման վայրի հետևում նշանակվում է **հավաքման պահեստային կետ**:

Որպես կանոն, ՄԳԽումբը հարձակվում է հրետանային ստորաբաժանումների, ակնանետների, գնդացիների և ԱԹՄ-ների կրակային պաշտպանության ներքո: Այսպիսի գործողությունները պահանջում են հատուկ արագություն և հստակություն: Քանզի հարձակումն իրականացվում է առավելագույն արագությամբ, ուստի ՄԳԽումբի անձնակազմից պահանջվում է քաջություն, վճռականություն և համարձակություն: Հակառակորդի FPV դրոնների հարձակման և ակնանետներից կրակ բացելու դեպքերում մոտոցիկլետը վարվում է կոտրված գծով: Եթե մոտոցիկլետը խափանվել (վթարի է ենթարկվել) կամ մխրճվել է ցեխի մեջ՝ թողնում են ռազմի դաշտում, շարունակում են կրակել և պատսպարվել մինչև տարհանման խմբի մոտեցումը:

Մարտում ՄԳԽմբերը կիրառում են հետևյալ մարտավարական հնարքները.

- մեկ թևի շրջառում,
- երկու թևերի շրջառում,
- շրջանցում,
- ճակատային հարձակում,
- կեղծ հարձակում:

«Մեկ թևի շրջառում», «երկու թևերի շրջառում» և «շրջանցում» մարտավարական հնարքների էությունն այն է, որ մոտոցիկլետավարների մեկ ենթախումբը հարձակվելով ճակատից, ինտենսիվ կրակով, ակնանետային հաշվարկների և ԱԹՄ-ների աջակցությամբ, պաշտպանում է մոտոցիկլետավարների մեկ այլ խմբի գրոհը, որը հարձակվում է առավելագույն արագությամբ թևից (թևերից) կամ թիկունքից, ի դեպ կրակը վարվում է շարժման ընթացքից: Եթե խմբերը հայտնաբերվում են և նրանց ուղղությամբ կրակ է բացվում, մոտոցիկլավարները սկսում են առավելագույն արագությամբ մանևրել, ներխուժելով հակառակորդի դիրքեր, հետիոտնացում են և դիմահար գնդակահարում հակառակորդին:

Մոտոցիկլավարների նշանացուցումն իրականացվում է՝ ըստ տեղական առարկաների (կողմնորոշիչների), շարժման ուղղությունից, տեսանյութերի միջոցով (ձայնագրված կամ իրական ժամանակում):

Նշանացուցման ժամանակ հաղորդվում է նպատակակետի ուղղությունը կողմնորոշիչից կամ մոտոցիկլավարի շարժման ուղղությունից, թիրախի անվանումը կամ դրա մոտակայքում գտնվող տեղանքի բնութագրական առանձնահատկությունները, դեպի թիրախ ընկած հեռավորությունը՝ մետրերով:

ՄԳԽմբի կիրառման հիմնական առավելությունները.

• **բարձր տարաշարժունություն** (արագ կենտրոնանալու և խորքից առաջ շարժման ունակություն, խոչընդոտների հեշտությամբ հաղթահարում և կտրտված տեղանքում արագ գործելու ունակություն),

• **աննկատելիություն** (մոտոցիկլետների համեմատաբար փոքր չափերը և բարձր արագությունը ՄԳԽումբը դարձնում են դժվար խոցելի թիրախներ),

- **շահավետություն** (համեմատած ծանր զրահատեխնիկայի մոտոտեխնիկան ավելի քիչ ռեսուրսներ է պահանջում պահպանման և շահագործման համար),
- **խոցման բարդություն** (խմբերի բարձր արագությունն ու ցրվածությունը բարդացնում են հետախուզական ԱԹՄ-ների և կրակային միջոցների աշխատանքը):



**Նկ. 2. ՄԳԽումբը գրոհի անցման բնագիծ առաջ շարժվելիս**

Բացի այդ, կիրառելով գիշերային տեսողության սարքեր և անձայն զենքեր ՄԳԽմբերը կարող են օգտագործվել սահմանափակ տեսանելիության պայմաններում, ինչը զգալիորեն բարդացնում է դրանց հայտնաբերումը՝ հաշվի առնելով պաշտպանվող ստորաբաժանումների գիշերային և ջերմային տեսողության սարքերի ցածր ապահովվածությունը:



**Նկ. 3. ՄԳԽմբի կիրառումը գիշերը**

Փորձագետների կարծիքով, եթե մոտոցիկլետը դուրս է գալիս հակահետևանքային ականի վրա, վարորդին և հրաձիգին հասցված վնասը համեմատելի չէ հետիոտն զինվորի ստացած վնասի հետ, քանզի, որպես կանոն, վնասի մեծ մասը իր վրա է ընդունում մոտոցիկլետը:

Հրամանատարների (պետերի) և տեղական իշխանությունների նախաձեռնության շնորհիվ ՌԴ ՋՈՒ առանձին բրիգադներում արդեն ձևավորվել և կիրառվում են մոտոցիկլետային դասակներ, որոնց մարտավարությունն ու հազվեցվածությունն անընդհատ բարելավվում են: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մարտական մոտոցիկլետի վարորդների բարձրորակ պատրաստումը տևում է մեկից երկու ամիս:

Ընդհանուր առմամբ, ռուսական հրամանատարությունը տեխնիկայի այս տեսակը բավականին հեռանկարային է համարում և այն դիտարկում է որպես ուկրաինական պաշտպանության ուժերի կողմից անօդաչու համակարգերի կիրառման ընդլայնման պատասխան բաղադրիչ:

## Հակազդեցություն ՄԳԽմբերի մարտավարությանը

Մարտական գործողությունների փորձը ցույց է տալիս, որ զինված պայքարի ժամանակակից պայմաններում, այնպիսի բնական խոչընդոտներ, ինչպիսիք են գետերը, ջրանցքները, լճերը, ճահիճները, խորը ձորերը, խիտ անտառները, քարքարուտները, բարձր բլուրները և 50 սմ-ից ավելի ձյան ծածկը (պայմանով, որ մոտոցիկլետը չի վերածվել ձնագնացի), չեն կորցրել իրենց նշանակությունը: Հետևաբար, պաշտպանության համակարգում մոտոցիկլավարների և զրահատեխնիկայի տեղաշարժը խոչընդոտելու համար անհրաժեշտ է լայնորեն կիրառել բնական խոչընդոտները, և որտեղ պայմանները թույլ են տալիս, ստեղծել արհեստական խոչընդոտներ:

Բնական խոչընդոտների հետևում նպատակահարմար է տեղակայել կրակային միջոցները, հրամանատարական դիտակետերը, դիտակետերը և թիկունքային ստորաբաժանումները, ինչը կբարձրացնի ստորաբաժանման մարտակարգի կայունությունը, բարենպաստ պայմաններ կստեղծի ուժերի և կրակի տարաշարժունության համար: Բնական խոչընդոտների մերձակայքում, որպես կանոն, առկա են տարածքներ կամ վայրեր, որոնք ՄԳԽմբերը կարող են հեշտությամբ հաղթահարել, ուստի բնական խոչընդոտները պետք է ուժեղացվեն ականապայթյունային և այլ ինժեներական արգելապատնեշներով:

Ընդհանուր առմամբ, ՄԳԽմբերի մարտավարությանը հակազդելու արդյունավետ եղանակներ կարող են լինել.

- առաջ շարժման և դիրքերին մոտենալու ուղիների ականապատում հակահետևակային ականներով, այդ թվում՝ հեռահար՝ ԱԹՄ-ների (անօդաչու ավիացիոն համակարգերի) միջոցով,

- սակավանկատեղի խոչընդոտների (ՄՅՈՒ տիպի), ձգված ճոպանների տեղադրում (անտառապատ տարածքում),

- ավտոտրանսպորտային միջոցները կանգնեցնելու համար նախատեսված տարբեր միջոցներ՝ տրիբուլներ (չորս թևանի աստղաձև փուշ), մեխերով պատված տախտակներ, փշալարեր (ժապավեն), հակատրանսպորտային ոգնիներ, փայտե գերաններ, փլատակներ, փոսեր (այդ թվում՝ քողարկված) և այլն,

- կազմակերպված հետախուզության (դիտարկման) համակարգ,

- կազմակերպված կրակային համակարգ,


- կազմակերպված և հաստատված փոխգործակցություն հարևանների, հերթապահ կրակային միջոցների հետ,

- «կանչով» օգնության հասնելու համար հերթապահ ռեժիմում FPV-դրոնների ստորաբաժանումներ պահելը:

Այս մեթոդները կիրառվում են՝ հաշվի առնելով իրավիճակը, տեղանքի պայմանները, որոշակի նյութերի և սարքավորումների առկայությունը, ուստի հակառակորդի մոտոցիկլետային ստորաբաժանումներին հակազդելու միջոցները պետք է նախատեսվեն հրամանատարների (պետերի) կողմից նախապես:



Նկ. 4. Տրիբուլ («գայլուկ», «սխտոր»)



Նկ. 5. Տեղադրված սակավանկատելի խոչընդոտի (M3II) գծային չափերը


### Դիվերսիա ճանապարհին

1. Թփերի մեջ քողարկված հակահետևակային ական ցցի վրա: Խոցման տրամագիծը 30 մ: *Առավելությունը*՝ արագ է տեղադրվում: *Թերությունը*՝ վտանգ է ներկայացնում յուրային քաղաքացիական բնակչության համար:

2. Հակատանկային ականներ: *Առավելությունը*՝ վտանգ չեն ներկայացնում յուրային բնակչության համար, քանի որ պահանջվում է զգալի ճնշման բանեցում (բեռնատարներ, տանկեր), որպեսզի ճայթիչը արձագանքի: *Թերությունը*՝ տեղադրման համար հարկավոր է ջանքերի գործադրում (մեկ ականի համար պահանջվում է մոտ 15 բույե, և սա այն ժամանակն է, որի ընթացքում հակառակորդը կարող է հայտնաբերել ձեզ):

3. Մարդու հասակի բարձրությամբ, ճանապարհի լայնքով, ձգված ամուր մետաղալարի կամ բարակ մետաղական ճոպանի տեղադրում: Տապալում է մոտոցիկլետները, վնասում է ուղևորներին:

4. Ճանապարհին եկայնքով և լայնքով մետաղական փշերի ցրում:



Նկ. 6. Հակառակորդի մոտոտրանսպորտի հակազդման տարբերակ

*Չախ նկարում՝ փշերի պատրաստում:*  
*Վերին աջ անկյունում՝ պատրաստի փուշ:*  
*Ստորին աջ անկյունում՝ փշի կիրառում:*

## Դիվերսիա ճանապարհներին / անվադողերի վնասման մետաղական փշեր Կիրառում.

- գիշերը ցրել ճանապարհին,
- տեղադրել կայանված տրանսպորտային միջոցների անիվների տակ:

Պատրաստում.


1. վերցրեք մոտ 12 սմ երկարությամբ, կտրվածքում 5-8 մմ, պողպատե քառակող հետան,
2. երկու ծայրերից սղոցեք մոտ 4 սմ,
3. սղոցելուց հետո առաջացած մասերը ծռեք տարբեր ուղղություններով,
4. սրեք բոլոր ծայրերը, որպեսզի ձևավորվեն սուր քառանկյուն ծայրեր:

Անկախ նրանից, թե որ ծայրով է այդպիսի փուշը ընկնում գետնին, մի փուշը, համենայն դեպս, միշտ վերևում լինելու: Այդպիսի փշերի դիմադրության ուժը բավարար է անվադողերը ծակելու համար:

Մարտական խնդիրների կատարման ընդհանուր և անմիջական նախապատրաստության միջոցառումների ընթացքում, հակառակորդի ՄԳԽմբերին արդյունավետ հակազդելու նպատակով, խորհուրդ է տրվում ստորաբաժանման հետ անցկացնել պաշտպանական վարժանքներ, որոնց ընթացքում մշակել հետևյալ ուսումնական հարցերը.

- դասակի և ջոկի դիրքերի խրամատների սարքապատում, այդ թվում հակահետևակային ականների տեղադրում (ՄՕԽ-50, ՕՅՄ-72), ազդանշանների (հրամանների) միջոցով դրանց կիրառման կարգի գործնական մշակում,
- դիրքերի պաշտպանության ժամանակ յուրաքանչյուր զինծառայողի կողմից անձնական հրաձգային և ստորաբաժանման (ջոկի) զենքերից «մոտոցիկլավար», «ԱԹՄ-դրոն» տիպի նշանակետերը (թիրախները) մարտական հրաձգությամբ ոչնչացման թեմայով վարժանքների կատարում, թաքստոցից ձեռքի նոնակների (պաշտպանական և հարձակողական) կիրառում,
- տեղանքի պաշտպանիչ հատկությունների և բնական խոչընդոտների օգտագործմամբ չպայթող արգելապատնեշների տեղադրում և կահավորում,
- կրակային քարտի կազմում՝ հաշվի առնելով «մեռած գոտիները», քողարկված առաջխաղացման ուղիները և ելման դիրքերը, որոնք կարող են օգտագործել ՄԳԽմբերը,
- ստորաբաժանումների հրամանատարների (ավագների) և նրանց տեղակալների կողմից ականանետային հաշվարկների կրակի ճշգրտման մշակում անմիջապես դիրքերից,
- դիտակետի սարքապատումը և դիտորդների կողմից հետախուզության վարումը,
- գործողություններ հրամանատարի (ավագի) գոհվելու (վիրավորվելու) դեպքում,
- պաշտպանության ընթացքում կապի և փոխգործակցության պահպանում հրամանատարության, հարևան ստորաբաժանումների, ականանետային հաշվարկների և ԱԹՄ ստորաբաժանումների հետ,
- ականանետային հաշվարկներով կրակային առաջադրանքների կատարում և պաշտպանվող հրաձգային ստորաբաժանումների հետ համատեղ FPV -դրոնների կիրառում:





**Նկ. 7. «Մոտոցիկլավար» թիրախի ընդհանուր տեսքը և գծային չափերը (սմ) հրաձգության վարժանքների համար**

Հաշվի առնելով պաշտպանության պլանավորման ժամանակ ՄԳԽՄԲԵԻ կիրառման հավանականությունը, հրամանատարները (պետերը) պետք է նախատեսեն.

- մոտովտանգավոր ուղղությունները և մոտեցման գաղտնի ուղիները,
- մինչև հարձակման անցնելը ՄԳԽՄԲԵԻ (ուժերի կուտակման) ապաստարանի հնարավոր վայրերը,
- ՄԳԽՄԲԵԻ դեմ պայքարելու համար դարանները,
- ՄԳԽՄԲԵԻ հակազդելու կրակի համակարգը (ներառյալ արգելափակող կրակը՝ հաշվի առնելով խմբերի մարտական արագությունները),
- հարևանների թևային կրակային միջոցները (նրանց կրակային դիրքերը և կրակի ուղղությունները),
- արգելապատնեշների և խոչընդոտների համակարգը,
- լուսային ապահովման խնդիրները,
- ուժերի և միջոցների բաշխումը, ուժեղացումը (ռեզերվը):

Այսպիսով, կարելի է ընդգծել, որ ժամանակակից մարտի պայմաններում մոտոցիկլետային ստորաբաժանումները կարող են իրենց կիրառությունը գտնել գործերի (ուժերի), այդ թվում, նաև ՀՀ ՁՈՒ-ի բոլոր տեսակի մարտական գործողություններում: Մինչդեռ այս ստորաբաժանումների առանձնահատկությունները դրանց կիրառումը տեղին են դարձնում այն դեպքերում, երբ չեն պահանջվում երկար հարձակողական և պաշտպանական գործողություններ: Մոտոցիկլետային ստորաբաժանումների կիրառման գործում հիմնականը դրանք օգտագործելու ունակությունն է, որտեղ անհրաժեշտ է գործողությունների հանկարծակիություն և կայծակնային արագություն:

Աղբյուրը՝ [https://vk.com/wall-98023451\\_8653?ysclid=m5qt0tpurx869286912](https://vk.com/wall-98023451_8653?ysclid=m5qt0tpurx869286912)